

բազում անգամ պարտաւորին տալ նմա դայն
պարզե զոր ինքն ցանկայ. նցն իսկ շահն Պար-
սից ոչ կարէ (թերեւ ոչ կամի) մերժել վիճը-
դրուածա նոցա. երթայ հասանէ գերվիշն ի գուռն
Ծահին, և առաջի պալատանն զկայ առեալ բե-
րէ զհողն սակաւիկ ինչ, ոչ աւելի քան զկան-
գուռն մի. սերմանէ ի նմա ցորեան և ստէպ ստէպ
ոռողէ մինչև բուսանի. յետ որոյ սկսանի խընդ-
րել պարզես. Ծահն ի նախատինս զրելով զցոր-
եանն բուսեալ, (թերեւ վասն այն, իրը զի զեր-
վիշն զանչափ ժամանակս մնաց առ զրանն նո-
րա առանց ողորմութեան) հրամայէ տալ նմա
պարզես. բազում անգամ արհամարհեալ դեր-
վիշն զնուազ տուրսն՝ զնայ նստի առ ցորենովն
մինչև զմեծամեծ պարզես առեալ, զձի զնոր
զգնելիս ևլու գառնայ ի տեղի իւր. բայց յետ
նորս այլ ոք աճապարեալ հասանէ ի տուն Ծա-
հին, և այսպէս գողջիր յերկոտասան ամիս տար-
ւցն գտանին անդ գերվիշք: — Եւրաքանչեւր
զիւզ Թաթարաց կամ Պարսից ունի զառանձին
մոլլայ, որ կեայ արդեամիք հասարակութեան,
պարտաւորութիւն սոցա է աղօթել ի մզկիթի, ու-
սուցանել ի զպրոցս և թաղել մեռեալս. զիսաւ-
որն սոցա կոչի «Ծիլիսլամ», . սա կարգէ ի
զիւզորայս կոմոլլայս, բազում անգամ կամք և
ընտրութեամբ ժողովրդեանն. Միայն երիցագոյն
մոլլայն կարէ առնել զպսակ և զբատասան,
որ անտանի և շեր, . վլէք և բողոքք մոլլայից
անկանին ընդ զատաստանաւ շկիլիսլամի: — Մուշ-
տէնուն է զումիւ տոհմի յառաջ եկելց ի Մահմե-
տէ. վասն որոյ յարգոյ և ակնածելի յոյժ առ
Մահմետակրօնս իրեւ օրինաւոր, քաղաքական և
կրօնական զումիւ հոգեքրականութեան նոցա իշ-
խանութիւնն. Մուշտէնուն ի Պարսս, մանաւանդ
յաւուրա անարի Ծահից այնչափ մեծ է, որչափ
նոյն իսկ թագաւորուկան արտօնութիւնն, մի՛ չկ-
անգամ յանցաւորի ուրումն, եթէ վճիռ ելիալ
է մահու, և մուշտէնուն խնդրէ զներումն, ազտա-
է այրն միանդաման:

(६-८-२-३-५-७-९)

ԱՐԴԱՌԱԿԵՑ ՎՈՐԴՎԱՐԱՏ ՍԵՐՄԱԿԱՆ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԿՂՐԵԿԵՆ ԲԵՇԱՏՐՈՒԹԻՒՆ
ԲՆՈՒԹԵՆ ԵՐԵԿՈՅՑԲՆԵՐ

(८०५०-८१ वर्ष के अनुसार)

L.T.

Urgent

Մենք արդէն գիտենք, որ մէկ մարմին
այրուելը ուրիշ բան չէ, այլ այն է, որ
դա այդ ժամանակ քիմիապէս միաւորվում
է թթուածնի հետ։ Օրինակի համար,
երբ որ փայտը այրվում է բաց օդում, այդ
ժամանակ փայտի մասները քիմիապէս մի-
աւորվում են օղի մջջ եղած թթուածնի
հետ, որով կազմվում են զանազան գա-
զեր և ցնդում, ֆնում է միայն ածուխը։
Ածուխն էլ իւր այրումը շարունակելով
բաղադրում է ածխաթթու, որ նոյնպէս
ցնդում է և թողնում միայնակ մոխիրը,
այս ինքն զանազան աղեր, որոնցմով ծա-
ռը սնունդ է առել իւր ածուն ժամանակ,
ստանալով այդ նիւթերը հողից։

Այժմ ծանօթանակը սյրման չետ,
տեսնենք ի՞նչպէս է լինում այդ, և վեր
առնենք որպէս օրինակ՝ ճշագուի մոմ:

Երբ որ պատրոյզը վառում ենք, դո-
րանից յառաջացած բաւականին բարձր
տաքութեամբը պատրոյզի շուրջը եղած
ճրագուի մասները սկսում են հալիլ և
այսպէսով կազմում են մի տեսակ փոս,
հալուած ճրագուով լիքը: Եյդ հալուած
ճրագուն պատրոյզի միջով (որպէս մազա-
կան խողովակների միջով) անդադար վե-
րե է բարձրանում և միաւղիվում օդի
մեջ եղած թթուածնի հետ, ալդ տեղ փո-

խարկվում է ցնդական գաղերի և ցնդումն Դոյն այդ գաղերի այրումն է, մոմի բոցը:

Եթէ ուշադրութեամբ նայենք մոմի բոցի վերայ, նորա մէջ կը նկատենք երեք մասն, որոնցից ամեն մինչվը թաղանթի պէս շրջապատռած է պատրոյզը: Բոցի ներքին մասնումը նկատելի է մժեարդոյն կլորակ, դա է ամենից առաջ պատրոյզին շրջապատռով, դորա վերայով պատռ է աւելի պարզ և պայծառ թաղանթը և վերջապէս երրորդ թաղանթը, որ ամենից վերն է և ամենից թափանցիկ լինելով հազեւ է նկապվում: Եյս ինչից է յառաջ գալիս:

Բոցի մութ մասնի մէջ համարեա թէ թթուածին չի ներս գնում, այդ պատճառով էլ, այդ մասնի մէջ այնքան տաքութիւն կայ միայն, որ ծրագուն հալվում է և այդպէսով բաժանվում են նորա բաղկացուցիչ մասները և փոխարկվում գտղերի: Միջին թաղանթի մէջ տաքութիւնը աւելի բարձր է, պատճառ՝ այդ տեղ աւելի շատ թթուածին է ներս գնում, արդ տեղ այրվում է ջրածինը ծրագուից բաժանուելիս, նմանապէս այրվում է և ածխածինը, որ ծրագուի բաղկացուցիչ մասներից մինն է, և կայծանում է մինչեւ սպիտակ գոյնը: Դորա համար այդ թաղանթը աւելի պայծառ է: Վերջապէս երրորդ թաղանթը ամենից տաքն է, պատճառ՝ այս տեղ օդի թթուածինը ոչ մի արդելք չունի իւր հաղորդակցութեան համար: Բոցի այդ մասնի մէջ բոլոր դաշերը որոնք բաժանվում են ծրագուից, բոլորվին այրվում են և փոխարկվում ածխածութուի և ջրային շողիների: Ու միջին մասնի ածխածինը միանդամայն չի

այրվում, այդ կարելի է ստուգել յետադայ փորձով: Վեր առնենք մի պաղ դաշտակ կամ արծաթէ գղալ, բռնենք նորան փոքր ինչ ժամանակ բոցի մէջը և յետոյ հանենք: Մենք կը նկատենք, որ գանակի այն մասը, որ գանվում էր բոցի միջին մասնումը, մրոտուել սեացել է, իսկ մուռը ուրիշ բան չէ, եթէ ոչ ածխի մասնունքներ, որոնք պաղ գանակին դիպչելով պաղել են և նստել նորա վերայ: Դորա հաշկառակ գանակի այն մասը, որ գանվում էր բոցի արտաքին թաղանթի մէջ, բոլորվին մաքուր է և խիստ էլ տաքացած: Դորա համար՝ երբ որ մենք կամենում ենք մի ամանով ջուր տաքացնել մոմի բոցի վերայ, ջուրը աւելի շուտով կը տաքաւայ, եթէ ամանը բռնենք արտաքին թաղանթի վերայ, իսկ եթէ ոչ ամանը կը մըրուածի միայն:

Երբ որ փշում ենք բոցի վերայ, որի պատրոյզը խիստ տաք է լինում այդ միջոցին, մոմը հանգչում է, բայց մի խիստ անդուրեկան հոսով ծուխ է բարձրանում: Եյդ ծուխը բաղկացած է լինում զանազան այրուող գաղերից, որոնք բաժանվում են վերլուծուող ձարպից: Փրչելով մենք ցածրացնում ենք այդ գաղերի բարձր բարեխառնութիւնը, այնպէս որ՝ նոքա այլ ևս չեն կարողանում այրուել և բոցը հանգչում է: Բայց հենց որ վառած ծծմբառը մօտեցնենք այդ ծուխին, նա խկոյն կը վառուի և իւր բոցը կը հաղորդէ պատրոյզին էլ և նրան էլ կը վառէ:

Ճրագուի բոցի վերայ բռնենք մի դաշտարկ և չոր շշ, միայն այնպէս՝ որ բերանը ուղեղ պատրոյզի վերայ լինի: Մենք

կը նկատենք, որ շիշե ներսի կողքերի վերայ երեւում են ջրի կաթիլներ: Դորա են ջրային շոգիները, որոնք կազմուեցան ձը բագուի այրուելուց, և յետոյ պաղ շիշեն դիալէլով՝ փոխարկվեցան ջրի կաթիլների: Խոկ եթէ այդ շիշը մի առժամանակ բոցի վերայ բռնելուց յետոյ, դորա մէջ ածենք կրային ջուր, կը նկատենք նորա մէջ պղարումն, որ յայտնապէս ցոյց կը տայ մեզ ածխաթթուի բաժանուելը ձը բագուի այրելու ժամանակ:

Մի կիսայրեաց մոմ վառենք և դնենք սեղանի վերայ: Եա կակսի լաւ այրուել, բայց ծածկենք նորան մի ապակեայ ծածկով, որ դործ են ածում կանթեղների վերայ, շատ շուտով կը հանգչի բոցը: Ինչո՞ւ համար: Երբ որ մոմը այրվում էր առանց ծածկոցի, նորա բոցը ամեն կողմից շրջապատուած էր օդով: Դորա համար մոմից մօտիկ թթուածինը այրվում էր թէ չէ, բոցին մօտենում էին նորանոր օդի մասունքներ, և այդպէսով անընդհատ բաւականաշափ թթուածին էր լինում մոմի այրելու համար: Բայց երբ որ մոմը ծածկեցինք, նորա ներսը այնքան քիչ թթուածին մնաց, որ մոմը հանգաւ շուտով: Այրուած թթուածնի աեզ նոր թթուածին չեկաւ և չէր կարող գալ, պատճառ՝ ծածկոցի կողքերը արգելք էին լինում օդի հոսելուն, իսկ վերքեի բացուածքից դուրս էին գալիս այրաւելուց յետոյ կազմուած դաղիրը: Բայց եթէ ծածկոցը փոքրինչ բարձր դնենք, որ նորա տակից օդ խաղայ, այդ ժամանակ մամը մինչեւ ի վերջ կայրի: Ինչո՞ւ համար:

Աբքան թթուածին որ այրվում է ծածկոցի ասկից և այրուած գաղերը վերեկ

ծակից դուրս են գնում, այնքան նորանոր օդ է մանում ծածկոցի տակ նորա վարի կողմի բացուածքներից, նոյնպէս այրվում եւ դուրս գնում վերեկից, այնպէս շարունակվում է անընդհատ մոմի այրուելը և այսպէսով մի տեսակ քարշողութիւն է յառաջ գալիս, այս ինքն օդի վերին մասները ցնդուելով, իրանց ետևից նորանոր օդի մասունքներ են վեր քաշում: Այս մի և նոյնն է յառաջ գալիս և վառարանի մէջ փայտը այրուելիս: Եթէ վառարանի ծըննելոյզը և գոները փակենք, շուտով կընդհատուի նորա մէջ այրուելը: Վառարանի մէջ նոր օդ չի կարող հոսիլ և դորա համար նորա մէջ թթուածնի պակասութիւն կերեայ: Աբքան սաստիկ է քարշողութիւնը վառարանի մէջ, այնքան լաւ և շուտ կոցրուին նորա մէջ փայտերը:

Մինք կրակը երկու կերպով ենք հանդցնում, կամ ընդհատում ենք օդի հոսումը, կամ պաղեցնում ենք բոցը: Օրինակ՝ ջրով հանգցնելու ժամանակ բոցը պաղում է, պատճառ՝ ջրի բարեխառնութիւնը ցածը է բոցի բարեխառնութիւնից, բայց սորանից ջրով ընդհատում ենք մասամբ օդի հոսումը: Եթէ ծինելոյզը վառուի, դորա հանգցնելու ամենից հեշտ հասրն է թրջած շուալներ ձգել վերան կամ թաց աւազ ածել: Առա հակառակ վառուած ճարպը չէ կարելի ջըրով հանգցնել, պատճառ՝ նա իւր թեթևութեամբը իսկոյն ջրի երեսն է անցնում և իւր բարձր բարեխառնութեամբը ջուրը փոխարկում է շոգիների, որոնք ցըրվում են այրուող ճարպը և ամեն կողմ տարածում բոցը: Այդ պատճառով երբ պէտք լինի հանգցնել վառուած իւղը

կամ ճարպը՝ հարկաւոր է ծածկել նորան
մի ինչ և իցէ պինդ մարմնով։

1.6.

Ընդառանութեան.

Վանին յայտնի է որ մենք ներս ենք
շնչում օդ, այդ շնչառութեան ընդհա-
տուելուն պէս կընդհատուի և կեանքը:
Աւրեմն տեսնենք ի՞նչ է յառաջ գալիս
մեր ներսումը, երբ որ ներս ենք շնչում
օդը, կամ ի՞նչ է պատահում այն տեղ
նոյն իսկ օդի հետ։

Վենք զիտենք որ օդով լիքը շիշի մեջ
այլվում է վառած լուցիիկը և թէ այդ
յառաջ է գալիս միմիայն օդի մեջ թը-
թուածին լինելուց։ **Ե**յժմ մէկ շիշ ջը-
րով լցնենք և զլխիվայր ընկղմենք ջրի
մեջ, ինչպէս որ արինք թթուածին ձեռք
բերելու ժամանակ, բերանի մեջ մացը-
նենք կորացրած խողովակի կարծ սրուն-
քը։ Օդը ներս ծծենք սասափի, և յետոյ
դուրս թողնենք խողովակովը շիշի մեջ,
այդ գործողութիւնը կրկնենք քանի մի
անդամ։ **Ե**յդ ժամանակ մենք կատանենք
շիշի մեջ այն օդը, որով մենք շունչ էինք
առել։ Եթիու շիշ պատրաստենք այսպի-
սի օդով։

Եյժմ շիշերից մէկի մեջ մացնենք վա-
ռած լուցիին, նա կը հանգչի։ Աւրեմն մեր
դուրս շնչած օդի մեջ էլ թթուածին չը
կայ։ Միւս շիշի մեջ ածենք կրացուը և
սկսենք ցնցահարել, իսկոյն յառաջ կը
գայ պղտորութիւն։ Աւրեմն արտաշնչած
օդի մեջ կայ ածխաթթու։ Բայց ի՞նչ տե-
ղեց է յառաջանում այդ ածխաթթուն
և ուր անհետացաւ թթուածինը։

Վանին ծանօթ է արիւնը, այն կոր-
միր հեղուկը, որ ներկում է մեր շրթունք-
ները, լեզուն, այտերը և տալիս է մեր բո-
լոր մարմնին կարմրավուն դոյն։ Եթու տա-
րածվում է մեր մարմնու բոլոր մասների
մէջ և հասում է անհամոր բարակ ու
փափուկ խողովակների միջով, որոնք աս-
վում են երակ։ Կայենք մեր ձեռների վե-
րայ, նոցա մէջ կաշուի տակից մենք կը
տեսնենք փոքրիկ երակներ։ Խիստ մանրե-
րը մենք չենք տեսնել, պատճառ նորա-
սաստիկ բարակ են լինում, բայց գոցա լի-
նելը նորանով ենք սառւգում, որ ինչ տե-
ղեց էլ որ ծակենք կաշին, իսկոյն արիւն
դուրս կը գայ։ **Վ**եր մարմնը իւր կարմիր
գոյնը գոյն այդ արիւնով լիքը մանր երակ-
ներիցն է ստանում, այդ արիւնն է մարմ-
նուն մնունգ տուողը, նա է որ փոխարի-
վում, գառնում է ոսկը, միս, ճարպ, ու-
ղեղ և ուրիշ մասունքներ մարմնի։ **Վ**անը
երակները միանում են մեծամեծ երակ-
ների հետ և հաստ հաստ խողովակների
ձևով արիւնը թափում են սրտի մէջ, որ
արեան շարժում տուողն է։ Միրտը դա-
տարկ պարկի ձև ունի մի անջրապեազ կայ-
կու մասնի բաժանուած, որոց մինը աս-
վում է աջակողթան՝ միւսը յախակողթան։
Երբ որ սիրտը սխմվում է, արիւնը սրտից
դուրս է հասում և երակների միջով տո-
րածվում մարմնու բոլոր մասանց մեջ։
իսկ երբ որ լայնանում է, արիւնը գալիս
է իւր մէջն է թափում։ **Ե**յն երակները,
որոնց միջով արիւնը թափում է սրտի
մեջ՝ ասվում են արիւնաբեր երակներ կոմ-
վենաներ, և կամ սոսկ երակներ, և պարու-
նակում են մոյտ կարմիր արիւն, որ էլ
պիտոնի չէ մարմնու մնալիս համար։

Ոորա հակառակ այն երակները, որոնք արիւնը սրտից տարածում են բոլոր մարմնի մէջ, պարունակում են բաց կարմիր արիւն, որ պիտանի է սննդեան համար։ Եյդ երակները ասվում են արիւնատաշ երակներ կամ արտերայժ և կամ շնչըտինք։ Բայց արեան հետ ի՞նչ տեղ է պատահում կերպարանափոխութիւն։

Մոյդ կարմիր արիւնը երկու հաստ երակով (վենայով) թափվում է սրտի աջակողմեան բաժնի մէջ, և այն տեղից սրտի սխմվելուց գնում է թոքերի մէջ։ Թոքերը պարկած են կուրծքի մէջ և երկու պարկի ձևով շրջապատում են սիրտը։ Երբ որ մենք ներս ենք շնչում օղը, նա բերանի կամ ռունգների միջով անցնում է շնչափողը, որ կուրծքի մէջ երկու ձիւղի է բաժանուած, իսկ այդ ձիւղերը անհամար թուով մանր ձիւղերի՝ որոնք վերջաւորվում են ամենափոքրիկ բշտիկներով։ Թոքերի բշտիկների մօսն են գալիս մէկ կողմից անսլիտանացած արիւնը, միւս կողմից օղը։ Ահա այս տեղ է յառաջ գալիս մոյդ կարմիր արիւնի կերպարանափոխութիւնը, նա այստեղ փոխարկվում է բաց կարմիր շնչերակային արեան։ Եյդ փոխարկութիւնը յառաջ է գալիս նորանից, որ օղի թթուածինը թթուացնում է վենայի մէջ եղած արեան ածխածինը, փոխարկում է նորան ածխածթուի, որին մենք արտաշնչում ենք շընչառութեան համար անպիտանացած ազտի հետ։ Իսկ արիւնը բոլորովին պիտանանալով մարմնու սննդեան համար՝ ներս է թափվում սրտի ձախակողմեան բաժնի մէջ, և այն տեղից դարձեալ սկսում է տարածութիւն մարմնու բոլոր մասանց մէջ,

այդպէս կատարելով իւր նշանակութիւնը վերադառնում է կրկին վենաների միջով և թափվում սրտի մէջ, իսկ այն տեղից թոքերի, ուր և մաքրվում է, որ էլե կըրկնէ մի և նոյն գործողութիւնը։ Եհա այսպէս արիւնը անդադար շրջան է առնուամ մեր մարմնու մէջ և մենք շունչ ենք առնուամ նորա համար, որ արիւնը կարողանայ սնուցանել մեր մարմննը։ Եծխաթը թուի հետ ի միասին մենք արտաշնչում ենք նոյնպէս և ջրային շոգիներ։ Մեզ արդէն յայտնի է, որ մեր արտաշնչած օղը պաղ տեղում մշուշ է կազմում, որ իջնում է մանրիկ կաթիլների ձևով պաղ առարկաների վերայ։ Ենթնակսենեակների մէջ ձմեռ ժամանակ պատուհանները չեն սառչում, սորա հակառակ այն սենեակների մէջ, որոնց մէջ բնակողներ կան, դրաւեից սառչող ապակիների վերայ մըշտապէս խոնաւութիւն է իջնում։

Թոքերից արտաշնչուած օղը էլ պիտանի չէ շնչառութեան համար, պատճառ՝ նորա մէջ ազատ թթուածինը չը կայ, որ կարող լինի մաքրել արիւնը։ Դորա համար որ տեղ որ շատ ժողովուրդ է լինում հաւաքուած, և այդ պատճառով հատնում է թթուածինը այնպէս, որ մընում է միայն ազօտը, ածխաթթուն և ջրային շոգիները, այդ ժամանակ մենք զդում ենք յոգնածութիւն և զլացաւ։ Առանից երկում է թէ ի՞նչքան կարեւոր է մեզ համար մաքուր օդ շնչելը։

Եւ այսպէս՝ մենք զիտենք արդէն, որ մթնոլորտի օղը երկու գաղերի — թթուածնի և ազօտի խառնուրդն է։ Ճինդ ծաւալ օդի մէջ մի ծաւալ թթուածին կայ և չորս ծաւալ ազօտ։ Կամ ի՞նչպէս

որ հասարակօրէն ասում են, 100 մաս օդի մէջ 21 մասը թթուածին է՝ 79ը ազօտ։ Իսայց եթէ կշեռով ուղինանք իմասնալ, այդ ժամանակ հարիւր մաս օդի մէջ 23ը կը լինի թթուածին, իսկ 77 ազօտ։ Իսացի սորանից՝ օդի մէջ էլի զանազան գաղեր կան խառնուած, օրինակ՝ ածխաթթու, ջրային շոգիներ և այլ գաղեր, որոնք բաժանվում են այրման ժամանակ, մինչեւ անդամ ամուր մարմիններ էլ կան օդի մէջ, ինչպէս են զանազան փոշիները։ Իսայց այդ խառնուրդները պահան աննըշան քանակութեամբ են, որ համարեաթէ նկատելի չեն։ Եւ յիրաւի, ուսումնականները սկսել են քննել օդը երկրի զանազան կողմերում, սարերի և դաշտերի վերայ, ամենայն տեղ թթուածնի եազօտի պարունակութիւնները միաչափ են գտնել։

Իսայց ինչո՞ւ համար մթնոլորտի օդի մէջ թթուածինը խառնուած է ազօտի հետ, և այն էլ այնպէս, որ թթուածինը առաւել սակաւ է քան թէ ազօտը։ Եթէ որ օդը միայն թթուածնից լինէր բաղկացած, այդ ժամանակ ամեն մէկ բոց անշնչանելի հրդեհ կը դառնար։ Զուտ թթուածնի մէջ ձգած կենդանին սկզբումը իրան լաւ է զգում, բայց յիտոյ թռքերի բորբոքումն է յառաջ գալիս, և այդ ժամանակը արիւնը անսովոր կարմրութիւն է ստանում։ Վզօտը ահա նորա համար է՝ որ մեղմացնի թթուածնի սաստիկ ներգործութիւնը։

Ո՞ւր են գնում հապա օդի մէջ եղած միւս զանազան խառնուրդները։ Իսկո՞ր այդ խառնուրդները հաւաքուելով մթնոլորտի մէջ, կարող էին բոլորովին ապահանել

օդը, բայց ջրային շոգիները անձրեի ձեռվ տեղալու ժամանակ տանում են իրանց հետ այդ խառնուրդները և ձգում երկրի վերայ, և այդպէսով մաքրում են օդը։ Իսացի այս բոյակրին անհրաժեշտ հարկաւոր է ածխաթթու, որին նոքա իրանց տերևների միջնորդութեամբ կուլ են տալիս օդի միջեց և փոխարկում իրանց համար մարմին, իսկ արեգակի ճառագայթների ազգեցութեամբը նոքա արտաշնչում են թթուածին։ Ածխաթթուով լիքը շեշ մէջ եթէ դնենք մի տերև ալից ձիւղ և յիտոյ գնենք արեգակի տակը, մի առժամանակից յիտոյ ածխաթթուն կը անհետանայ և շեշ մէջ կերեայ թթուածին։

ԴԱՇԱՐ ԱՊԱՅԵԱՆՑ

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՀԱՅ ԱԶԳԻ Ի ՀԱԽԱՏՍ ԵՒ Ի ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Եշխարհըիս երեսին ինչպէս ամեն ազդ, նոյնպէս և մեր Վզզը ունեցել է ազգային յատկութիւններ, ունէր և ազգային պահասութիւն, ազգային յատկութիւնով իւր քրիստոնէական հաւատքին մէջ ամեն ազգերէն յառաջ փայլեցաւ, և ազգային գրականութեամբ եկեղեցական դպրութեան մէջ յառաջազիմութիւն գործեց, ու իր քրիստոնէական եկեղեցիքը անխախտելի պահելով ի դրանց դժոխոց՝ իր ազգութիւնն էլ հաստատուն պահեց։ մէկի մէջ իրեն յատկացեալ աստուածագաշտութեամբ, միւսի մէջ իր ուսումնասիրութեամբը, մէկով իր առ Վա-